

## Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

### ՀՀ 2014թ. գյուղատնտեսական համատարած հաշվառման նախապատրաստման և անցկացման Երևան քաղաքի հանձնաժողովի նիստի

Ք. Երևան

22.08.2014թ. ժ.10<sup>00</sup>

**Նիստը նախագահում էր** ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ, ՀՀ 2014թ. անցկացվելիք գյուղատնտեսական համատարած հաշվառման նախապատրաստման և անցկացման Երևան քաղաքի հանձնաժողովի նախագահ պարոն **Վաչե Տերտերյանը**:

**Մասնակցում էին** ՀՀ 2014թ. գյուղատնտեսական համատարած հաշվառման նախապատրաստման և անցկացման Երևան քաղաքի հանձնաժողովի անդամները, Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարները, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի Երևան քաղաքի գործակալության տարածքային ստորաբաժանումների ղեկավարները:

**Ներկա էին** ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության նախագահ, ՀՀ 2014թ. գյուղատնտեսական համատարած հաշվառման նախապատրաստման և անցկացման համապետական հանձնաժողովի նախագահի տեղակալ պարոն Ստեփան Մնացականյանը, ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ, ՀՀ 2014թ. գյուղատնտեսական համատարած հաշվառման նախապատրաստման և անցկացման համապետական հանձնաժողովի անդամ, գյուղատնտեսական համատարած հաշվառման աշխատանքները համակարգող պարոն Գագիկ Անանյանը, ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ, ՀՀ 2014թ. գյուղատնտեսական համատարած հաշվառման նախապատրաստման և անցկացման համապետական հանձնաժողովի անդամ, գյուղատնտեսական համատարած հաշվառման աշխատանքները համակարգող պարոն Գագիկ Գևորգյանը, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության վիճակագրական բաժնի աշխատակիցներ, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի ստորաբաժանումների ու գյուղատնտեսական համատարած հաշվառման (ԳՀՀ) վարչության աշխատակիցներ Վարդան Գևորգյանը, Արսեն Ավագյանը, Գոհար Նշանյանը, Ռաֆայել Շահգուլյանը, ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության փորձագետ Օլեգ Կառան:

#### **Օրակարգում ներառված էին հետևյալ հարցերը.**

1. Գյուղատնտեսական համատարած հաշվառման նպատակը և կարևորությունը:
2. Գյուղատնտեսական համատարած հաշվառման նախապատրաստման աշխատանքների ընթացքը:
3. Երևան քաղաքի հանձնաժողովի և վարչական շրջանների ղեկավարների կողմից ցուցաբերվելիք օժանդակության մասին:
4. Այլ հարցեր (հարց ու պատասխան):

**Բացման խոսքով** հանդես եկավ նիստը նախագահող, ՀՀ Երևան քաղաքի հանձնաժողովի նախագահ պարոն **Վաչե Տերտերյանը**:

Նա ողջունեց նիստի մասնակիցներին և առաջարկեց աշխատանքը սկսել համաձայն ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության (ՀՀ ԱՎԾ) կողմից ներկայացված օրակարգի: Օրակարգում ընդգրկված հարցերը ներկայացնելու համար նա խոսքը տվեց ՀՀ ԱՎԾ նախագահ պարոն Ս. Մնացականյանին:

**Ս.Մնացականյանը** շնորհակալություն հայտնեց հանձնաժողովի նախագահին, անդամներին, վարչական շրջանների ղեկավարներին և մյուս մասնակիցներին Երևան քաղաքի հանձնաժողովի նիստին մասնակցության համար ու առաջարկեց սկսել աշխատանքը համաձայն օրակարգի:

Օրակարգում ընդգրկված բոլոր հարցերը (համակարգչային ներկայացմամբ 16 պատկեր համառոտագիրը, որը կցվում է) ըստ հերթականության ներկայացվեցին պարոն Ս. Մնացականյանի կողմից:

**Ս.Մնացականյանի** կողմից հատուկ առանձնացվեցին այն հիմնահարցերը, որոնք առաջնահերթ են ԳՀՀ նախապատրաստական աշխատանքների իրականացման շրջանակում:

Այնուհետև պարոն Վ. Տերտերյանի և Ս. Մնացականյանի կողմից առաջարկվեց անկաշկանդ քննարկել հետաքրքրող ցանկացած հարց: Զեկուցումների շուրջ ծավալված մտքերի փոխանակությանը մասնակցեցին վարչական շրջանների ղեկավարները և այլ մասնակիցներ:

**Հնչեցված հարցերը վերաբերում էին** գյուղատնտեսական համատարած հաշվառման նախապատրաստական և կազմակերպչական աշխատանքներին, հաշվարարների ընտրության իրականացման առանձնահատկություններին և այլ հարցերի:

**Ընդունվեց ի գիտություն.**

ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության նախագահ Ս. Մնացականյանի տեղեկատվությունը գյուղատնտեսական համատարած հաշվառում իրականացնելու անհրաժեշտության, իրականացման ընթացակարգերի և ժամկետների վերաբերյալ:

**Որոշվեց առաջարկել.**

1. ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության նախագահ Ս. Մնացականյանին՝

ա) գյուղատնտեսական համատարած հաշվառման գործընթացին առնչվող անհրաժեշտ տեղեկատվությունը 3-օրյա ժամկետում տրամադրել ՀՀ տարածքային կառավարման նախարարություն Երևանի քաղաքապետարանին և Երևանի վարչական շրջանների ղեկավարներին փոխանցելու նպատակով:

2. Երևան համայնքի ղեկավար Տ. Մարգարյանին՝

ա) նշանակել Երևանում գյուղատնտեսական համատարած հաշվառման գործընթացը համակարգող պատասխանատու պաշտոնյա և համապատասխան թեկնածությունը 3-օրյա ժամկետում ներկայացնել ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության Երևանի տարածքային կենտրոն

բ) 10-օրյա ժամկետում Երևանի վարչական շրջանների ղեկավարներից հավաքագրել համապատասխան մասնագիտական կարողություններ ունեցող հաշվարարների թեկնածություններ և ներկայացնել ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության Երևանի տարածքային կենտրոն

գ) 10-օրյա ժամկետում Երևանի վարչական շրջանի ղեկավարներից հավաքագրել հաշվարարներին 3 ամիս ժամկետով համապատասխան տարածքներ տրամադրելու վերաբերյալ առաջարկություններ և ներկայացնել ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն՝ տեղեկացնելով ՀՀ ՏԿՆ-ին:

3. Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին՝

ա) գյուղատնտեսության համատարած հաշվառման գործընթացի արդյունավետ կազմակերպման նպատակով աշխատակազմերում առանձնացնել մեկ կամ երկու պատասխանատու աշխատակիցներ և վերջիններիս թեկնածությունները ներկայացնել ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության Երևանի տարածքային կենտրոն

բ) մեկ անգամ ևս ուսումնասիրել շենքերի և շինությունների համարակալման առկայությունը և արդյունքների մասին տեղեկացնել ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության Երևանի տարածքային կենտրոն:

**Եզրափակիչ խոսքով հանդես եկավ Վաչե Տերտերյանը և հավաստիացրեց,** որ Երևան քաղաքում գյուղատնտեսական համատարած հաշվառումը կանցնի պատշաճ մակարդակով, քանզի դրա անցկացումն ամբողջ երկրի պատիվն է: